

## ԱՐՏԱՍԻՈՂ ՈՒՌԻ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Երբ անհուն դարեր անշունչ, անվերդով  
Հողագունդն ուզեց շունչ առնել կեանքով.  
Երբ լայն դաշտերում փռւեցան բոսեր,  
Լցրին կենդանիք երկիր ու եթեր.  
Երբ լուռ ալիքներ կապուտ ծովերի  
Եռացին կեանքով ջրայինների  
Ու մարդիկ, իբրև ամենից հըզօր,  
Պարձան բըռնութեամբ նոցա թագաւոր,—  
Ահա այդ օրից տիրեց աշխարհին  
Շրփոթ-աղմըկի կըռւարար ոգին:

Անցան անհամար ու երկար դարեր:  
Մարդիկ անբարիշտ ցերեկ ու գիշեր  
Թափեցին արիւն առատ անխընայ  
Իրանց հարազատ մօր կըրծքի վերայ.  
Լայն և ընդարձակ աշխարհի միջին  
Եղբայրը խըլեց իւր եղբօր բաժինն,  
Կապեց ամրապինդ նորան շղթայով,  
Ճընշեց թշուառին ըստըրկի լըծով  
Եւ ամեն սարի ու քարի վերան  
Պըրօշմեց կընիք անարդարութեան:

Ծընող երկրագունդ— ծերունի անգոր—  
 Տեսաւ այս չարիք, ըզգաց իւր սև օր.  
 Եւ ահա նորա վերաւոր սըրտից  
 Ելան ուռիներ անթիւ տեղերից,  
 Տըխուր տերևներ կախեցին գետին  
 Ու խեղճ ծընողի ցաւերը լացին:  
 Դեռ մինչև այսօր լալիս են նոքա...  
 Եւ այն ո՛վ գիտէ, արդեօք պիտի գա՞յ  
 Մի օր, երբ տըրտում, արտասւող ուռին  
 Ուրախ, ժրպտերես նայէ աշխարհին: